

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2021 թ. մարտի 19-ին կայացած թիվ 7 առցանց նիստի

Գիտական խորհրդի 40 անդամներից նիստին մասնակցել են 30-ը:

1. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի հեռակա ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցը:
2. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Կարեն Արամայիսի Ղազարյանի դոկտորական ատենախոսության թեմայի վերահաստատման հարցը:
3. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի 2015-2019 թթ. հեռակա ասպիրանտ Անի Ռոբերտի Սաղաթեյանի գիտական ղեկավարի (գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կ.գ.դ. պրոֆ. Ա.Հ. Թոչունյան) փոփոխության և ատենախոսության թեմայի վերահաստատման հարցը:
4. Հայ-Ռուսական Սլավոնական համալսարանի կենսաինժեներիայի, կենսաինֆորմատիկայի և մոլեկուլային կենսաբանության ամբիոնի ասպիրանտներ՝ Էմմա Ղռեջյանի և Արմինե Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցը:
5. Դոցենտի և պրոֆեսորի գիտական կոչման շնորհման երաշխավորման հարցը:
6. Ընթացիկ հարցեր:

1. **ԼՍԵՑԻՆ՝** ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի հեռակա ասպիրանտների՝ Գայանե Մխիթարի Հայրապետյանի Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ, Աննա Վալերիկի Վարդանյանի Գ.00.02 «Կենսաֆիզիկա և կենսաինֆորմատիկա» մասնագիտությամբ, Արմինե Մանվելի Քոչյանի Գ.00.08 «Կենդանաբանություն, մակարոնաբանություն, էկոլոգիա» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Է.Ս. Գևորգյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի, դոցենտ, կ.գ.դ. Կ.Ա. Թոչունյանը, կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Պ.Հ. Վարդանյանը, կենդանաբանության ամբիոնի վարիչ, կ.գ.դ. պրոֆեսոր Մ.Ս. Առաքելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել Գայանե Մխիթարի Հայրապետյանի թեկնածուական ատենախոսության թեման **«Գինու արտադրության թափոնների կենսաքիմիական փոխակերպումը կենսազանգվածի և կենսաէներգիայի»** Գ.00.04 կենսաքիմիա մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Թոչունյանին:

Հաստատել Աննա Վալերիկի Վարդանյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ **«Որոշ ցածրամոլեկուլային միացությունների փոխազդեցության ուսումնասիրությունները այլումինի հետ ՄՄ ԷՄԱ ազդեցության ներքո»**, Գ.00.02 **«Կենսաֆիզիկա և կենսաինֆորմատիկա»** մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել կ.գ.դ., պրոֆեսոր Պ.Հ. Վարդանյանին:

Հաստատել Արմինե Մանվելի Քոսյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ **«Հայաստանի սարդերի ձևաբանական և գենետիկական բազմազանությունը»**, Գ.00.08 **«Կենդանաբանություն, մակարոօճաբանություն, էկոլոգիա»** մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել կենդանաբանության ամբիոնի վարիչ, կ.գ.դ. պրոֆեսոր Մ.Ս. Առաքելյանին:

2. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Կարեն Արամայիսի Ղազարյանի դոկտորական ատենախոսության թեմայի վերահաստատման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս. Գևորգյանը, էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Կարեն Արամայիսի Ղազարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ վերահաստատել էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Կարեն Ղազարյանի **«Հայաստանի Հանրապետության ռիսկային որոշ տարածքների հողերի վատթարացման էկոլոգիական հետևանքների գնահատումը և բարելավման ուղիները»** դոկտորական ատենախոսության թեման:

3. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի 2015-2019 թթ. հեռակա ասպիրանտ Անի Ռոբերտի Սաղաթեյանի գիտական ղեկավարի (գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կ.գ.դ. պրոֆ. Ա.Հ. Թոչունյան) փոփոխության և ատենախոսության թեմայի վերահաստատման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Է.Ս. Գևորգյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.դ. Կ.Ա. Թոչունյանը, կ.գ.թ., դոցենտ Հ.Հ. Փանոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի նախկին հեռակա ասպիրանտ Ա. Սադաթեյանի նոր գիտական ղեկավար նշանակել ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Հ.Հ. Փանոսյանին և վերահաստատել թեկնածուական ատենախոսության թեման **«*Thermus scotoductus* K1 շտամի ջերմակայուն ԴՆԹ պոլիմերազ I-ի հետերոլոգիական էքսպրեսիան, բնութագրումը և կենսատեխնոլոգիական ներուժը»** վերտառությամբ:

4. ԼՍԵՑԻՆ՝ Հայ-Ռուսական Սլավոնական համալսարանի կենսաինժեներիայի, կենսաինֆորմատիկայի և մոլեկուլային կենսաբանության ամբիոնի ասպիրանտներ՝ Էմմա Ղռեջյանի և Արմինե Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Է.Ս. Գևորգյանը, կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Պ.Հ. Վարդևանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել Էմմա Ղռեջյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ **«Արծաթի նանոմասնիկների նկատմամբ բակտերիաների կայունության ազդեցությունը այլ հակամանրէային միջոցների հանդեպ զգայունության վրա»**, Գ.00.02 «Կենսաֆիզիկա, կենսաինֆորմատիկա» մասնագիտությամբ և գիտական ղեկավար հաստատել կ.գ.թ. դոցենտ Ա.Ա. Հովհաննիսյանին:

Հաստատել Արմինե Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ **«Բջջային կառուցվածքների հետ կենսաձին նանոմասնիկների ազդեցության գնահատման նոր մոտեցումներ»**, Գ.00.02 «Կենսաֆիզիկա, կենսաինֆորմատիկա» մասնագիտությամբ և գիտական ղեկավար հաստատել կ.գ.թ. դոցենտ Ա.Ա. Հովհաննիսյանին:

5. ԼՍԵՑԻՆ՝ Դոցենտի և պրոֆեսորի գիտական կոչման շնորհման երաշխավորման հարցը: Դոցենտի գիտական կոչմանը ներկայացվել են՝ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտներ, կ.գ.թ. Անուշ Արամայիսի Աղաջանյանը և կ.գ.թ. Արմինե Արմենի Մարգարյանը; պրոֆեսորի գիտական կոչմանը՝ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.դ. Կարեն Արմենի Թոչունյանը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ մրցութային հանձնաժողովի նախագահ Ֆ.Դ. Դանիելյանը:


ՈՐՈՇԵՑԻՆ՝ երաշխավորել կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասիստենտներ, կ.գ.թ. Անուշ Արամայիսի

Աղաջանյանին և կ.գ.թ. Արմինե Արմենի Մարգարյանին դոցենտի գիտական կոչում և կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի դոցենտ, կ.գ.դ. Կարեն Արմենի Թոչունյանին պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու համար:

Նիստի ժամանակ գիտական խորհրդի անդամների կողմից քննարկվեցին մի շարք ընթացիկ հարցեր, ինչպես նաև երկրում կորոնավիրուսային հիվանդության իրավիճակը: Կենսաբանության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Է.Ս. Գևորգյանը, նշեց, որ Հայաստանում աճել է հիվանդությունների թիվը, հետևաբար հաշվի առնելով կորոնավիրուսային հիվանդության աճող տեմպերը և դրանով պայմանավորված ռիսկերը, առաջարկեց կենսաբանության ֆակուլտետում ուսումնական գործընթացը՝ դասախոսությունները, գործնական և լաբորատոր պարապմունքներն անցկացնել հեռավար <https://e-learning.y-su.am/> հարթակում Zoom ձևաչափով, ինչը միաձայն ընդունվեց:

Գիտական խորհրդի նախագահ՝

ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ.



Է.Ս. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝
դոցենտ



Ի.Վ. Շահագիզյան